ԱԼԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ, Արարատ, Երևան, «Արամեա» գիտամշակութային բարեգործական ընկերության հրատարակչություն, 1995, 480 էջ։

Անկախության հռչակումից ու հայոց պետականության վերընձյուղումից հետո, անցած այս կարճ ժամանակամիջոցում հայրենասիրական մի շարք նախաձեռնություններ են սկզբնավորվել։ Դրանցից մեկն էլ «Հայաստանի Հանրապետության բնակավայրերը» մատենաշարի հիմնադրումն է։ Այդ մատենաշարով այսուհետև պարբերաբար տպագրվելու են Հայաստանի ու հարակից շրջանների հայաբնակ գյուղերի ու ավանների հավաստի պատմությունը վերհանող գրքեր։ Դրա լավագույն առհավատչյան է մատենաշարի անդրանիկ գիրքը՝ Ալբերտ Խաչատրյանի հեղինակած «Արարատը», որը լույս է ընծայել «Արամեա» գիտամշակութային բարեգործական ընկերությունը։ Այն նվիրված է մեր հանրապետության խոշորագույն գյուղերից մեկին՝ Արարատին, որը գտնվում է նույնանուն շրջանում, Երևան-Նախիջևան երկաթուղու վրա, մայր Արաքսի ձախ ափին, իրիլիական Մասիսների հովանու ներքո։ Արարատը Երևանից հեռու է 42, իսկ վերջի շրջկենտրոնից՝ 14 կմ։ Ունի 5595 հեկտար տարածք, որից 813-ը վարելահողեր, իսկ 1664-ը արոտավայրեր են։ Բնակչությունը 1994 թ. դրությամբ եղել է 7950 մարդ, որից 7519-ը հայ, 600-ը եզդի, 10-ը ռուս և 1-ը գերմանացի։ Արարատցիները հիմնականում զբաղվում են այգեգործությամբ, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ և անասնապահությամբ։ Գյուղն ունի նաև խաղողի հարուստ այգիներ։ Այստեղ անցյալում դրաղվել են նաև բամբակի մշակությամբ։ Նրա շրջակայքում են Արարատի ցեմենտի-շիֆերի կոմբինատն ու ոսկու կորզման ֆաբրիկան և այլ հիմնարկ-ձեռնարկություններ։ Այստեղ է գտնվում նաև Արարատի գինու հանրահայտ գործարանը։ Գյուղի շրջակայքը հարուստ է տրավերտիններով ու հանքային ջրերով, այստեղ կա օնիքսային մարմարի հանք, որի մշակումից տեղում ստանում են դեկորատիվ սալիկներ։

Արարատ գյուղի հիմնադրման թվականը «Հայկական սովետական հանրագիտարանում» նշված է 1828-ը (հ. 1, էջ 693)։ Այս տվյալը գրքում հերքել է Ա. Խաչատրյանը և բազմաթիվ փաստերով հաստատել, որ գյուղը գոյություն է ունեցել դեռևս վաղնջական ժամանակներից։ Հեղինակը շատ այլ փաստեր էլ է ճշգրտել, որոնք վերաբերում են Արարատի տարեգրությանը։ Գյուղը հիմնադրել է Օհան անունով մի շինարար, որն իր երեք որդիների հետ եկել է Ակոռիից ու բնակություն հաստատել այստեղ։ Գյուղի հնադարյան գերեզմանոցում մինչև այժմ պահպանվում է մի մատուռ-ուխտատեղի, որը կոչվում է Նրա անունով։ Մատուռում կա մի հին շիրիմ, վրան՝ տապանաքար, դա Օհանի գերեզմանն է։ Արարատի առաջին անունը, ըստ ավանդությունների, եղել է Օհանաշեն, ապա անվանվել է Մարտակերտ։ Իսկ XVII դ. գրավոր աղբյուրներում այն արդեն հիշատակվում է Դավալու անունով, ուր բնակվել են միայն հայեր։ Այդ է վկայում գյուղի՝ մինչև այսօր պահպանված առաջին գերեզմանատունը, որի տապանաքարերի վրա կան խաչեր և հայերեն գրեր (էջ 17—19)։

Իրանի Շահ-Աբաս արքայի հրամանով 1604 թ. Արարատյան նահանգի և բազմաթիվ այլ գավառների հայությունը, այդ թվում և Արարատ գյուղի բնակչությունը, ենթարկվում է բռնագաղթի։ Սակայն շուտով գաղթի ճամփաներից փախած բնակիչները վերադառնում են իրենց հայրենի դյուղը և շարունակում ապրել այնտեղ։ Հետագայում՝ 1604—1828 թթ. միջև ընկած ժամանակահատվածում, գյուղում հաստատվում են նաև թուրքեր։ Նրանք էլ գյուղը (Մարտակերտ) վերանվանում են Դավալու։ Կա այս անվան ժողովրդական երկու բացատրություն. առաջինը կապվում է թուրքերեն դավա-ուղա բառի, իսկ երկրորդը՝ դավալի-կովի ու վեճի վայր հասկացության հետ։ Թե ո՞րն է արանցից հավաստին, դժվար է ասել։ Սակայն մեզ թվում է, որ ժամանակին այստեղ զարգացած է եղել ուղտաբուծությունը, և գյուղի անվանափոխությունը կատարվել է դրա հետևանքով։ Նույնը պնդում է նաև գրքի հեղինակը։

1828 թ. ռուս-թուրքական պատերազմից հետո Մակուից և Մուշից նահանգներում են 40 ծուխ հայեր և բնակություն հաստատում Դավալուում։ 1831-ին, ըստ Ի. Շոդենի կատարած մարդահամարի տվյալների, գյուղն ունեցել է 633 հայ բնակիչ և երկու թուրք ընտանիք։ Հետագայում շատ աղետներ ու փորձություններ են անցել գյուղի գլխով, սակայն այն միշտ

մնացել է հաստատուն և երբեք չի ընկոկել օտար բռնակալների առջև։ Դավալուն թուրքական բազմաթիվ արշավանքների ընթացքում հաղթանակով է դուրս եկել, և նրա քաջարի բնակիչները երբեք չեն լքել իրենց հայրենի բնակավայրը։ Այն, փաստորեն, հարավ-արևելքից Արարատյան դաշտ մտնող և դեպի Երևան տանող հանապարհի առաջին ամրակուռ դարպասն է եղել, որը երբեք չեն կարողացել բացել թուրք բարբարոսները (էջ 23—28)։

Խորհրդային կարգերի օրոք, 1935 թ. հունվարից, գյուղը գտնում է իր իսկական անունը։ Դավալուն անվանվում է Արարատ։ Անցած տասնամյակներում շատ բան է փոխվել Արարատում, գյուղը հզորացել ու շենացել է և այսօր դարձել է մի գեղեցիկ ավան՝ իր քաղաք-արվարձաններով։ Գյուղն այժմ ունի երկու միջնակարգ և մեկ ութամյա դպրոց, մշակույթի տուն, ակումբ, գրադարան, բուժկայան, մսուր-մանկապարտեզ, կապի բաժանմունք, կենցաղսպասարկման բազմաթիվ ծառայություններ և այլ օբյեկտներ, որոնցում աշխատում են հարյուրավոր արարատցիներ։ Հնուց ի վեր Արարատը տվել է բազմաթիվ անվանի մարդիկ. գիտնականներ, գրողներ, արվեստագետներ, բժիշկներ, ուսուցիչներ, ինժեներներ, բարձրաստիճան պետականներ, ռազմական գործի գիտակներ և այլն, որոնք սրբությամբ ու հպարտությամբ են պահել իրենց ծննդավայրի անունը և սիրով ու անմնացորդ նվիրումով ծառայել հարազատ ժողովրդին։

Հայրենասիրական մեծ աշխատանք է կատարել գրքի հեղինակը՝ Ա. Խաչատրյանը, որը կարողացել է վաղնչական ժամանակներից մինչև մեր օրերը գեղարվեստական պատումի լեզվով հյուսել հայրենի գյուղի հարուստ պատմությունը։ Երկար տարիներ լինելով Արարատի դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ապա՝ նաև տնօրեն, աշխատանքից աղատ ժամանակ նա հանդիպումներ է ունեցել գյուղի տարեց մարդկանց հետ, գրի առել նրանց պատմած ավանդություններն ու հավաստի պատմությունները, հետազոտել է հնաբլուրները ու ուսումնասիրել արխիվները, կարողացել պատմական ու գեղարվեստական հարուստ դրականություն և այդ ամենի միջից բառ առ բառ, տող առ տող հավաքել ու ի մի է բերել հայրենի գյուղին վերաբերող տեղեկություններն ու փաստերը։ Եվ այդպես, նրա տասնամյակների մեղվաջան աշխատանքը տվել է ցանկալի արդյունք. այսօր մեր սեղանին է «Արարատ» ստվարածավալ գիրքը։ Հայրենագիտական այդ գրքում մանրամասնորեն տրված են Արարատ գյուղի անցյալն ու ներկան։ Այն կարդացողը շատ բան կիմանա այդ գեղատեսիլ բնակավայրի ու նրա մարդկանց մասին։ Արարատը, ընկած լինելով Հայաստանով անցնող միջազգային երկու գլխավոր ճանապարհներից մեկի՝ Հյուսիսային մայրուղու վրա, իր գոյության ընթացքում վկա է եղել բազմաթիվ մեծ ու փոքր իրադարձությունների։ Այստեղ ժամանակին հյուրընկալվել են անգլիացի ճանապարհորդ ու դիվանագետ Ջեյմս Մորիերը, գերմանացի դիվանագետ Ֆրեյդմանը և ճանապարհորդ Մորիս Ֆոն Կոցեբուն, բրիտանական բանակի գնդապետ Ջոն Ջոնսոնը, ռուս գրող ու դիվանագետ Ալեքսանդր Գրիբոյեդովն ու գերմանացի երկրաբան Հերման Արիխը, Խաչատուր Աբովյանն ու Բաֆֆին և վերջապես մեր դարում՝ Ալեքսանդր Մյասնիկյանն ու Ճղասպ Խանջյանը և շատ ուրիշներ։ Ճանապարհորդներն իրենց նոթերում հետաքրքիր ու արժեքավոր շատ տեղեկություններ են թողել գյուղի մասին։ Գիրքն ընթերցելով՝ կարելի է ծանոթանալ դրանց։ Նրանում կարելի է գտնել բազմաթիվ տեղեկություններ, որոնք հարստացնում են ոչ միայն Արարատ գյուղի, այլև Արարատյան աշխարհի պատմությունը։ Հեղինակը մանրամասնորեն տալիս է գյուղի ծագումնաբանությունը, երկրագործական մշակույթը, անդրադառնում է աղգաբնակ սովորություններին, կենցաղաբարությանը, հոգևոր կյանքին ու հավատալիքներին, ժողովրդական բժշկությանը, խաղերին ու զբոսավարությանը և շատ այլ բնագավառներ։ Ներկայացվում են նաև գյուղի տոհմաբանությունը, նշանավոր մարդիկ՝ իրենց աղգարանությամբ, նրանց գործունեության ոլորտները և այլն։ Այդ ամենն այստեղ հնարավոր չէ մեկ առ մեկ թվարկել։ Հեղինակն իր ասելիքը ավելի հավաստի դարձնելու նպատակով գրքում բերել է մի շարք աղյուսակներ ու ցուցակներ գյուղի ծխերի, մարդկանց դրազմունքի և ունեցվածքի, մարդահամարների ու հողաբաժանումների վերաբերյալ, որոնցից վերջինը և ամենաճշգրտվածը վերցված է գյուղխորհրդի 1994 թ. ծխամատյանից։ Նա գրի է առել նաև գյուղում տեղի ունեցած դեպքերի ու անցքերի պատմությունները, առանձին մարդկանց մասին հորինված ծիծաղաշարժ դրույցները և այլն։

Գրքում առանձին գլուխներով ներկայացված են Հայրենական մեծ պատերազմին արտաքսվածների մասնակցությունը, 1937 և 1948—49 թթ. ստալինյան բռնությունների և աքսորի զոհերը, գյուղի մարդկանց աշխատանքային սխրանքները, մշակույթն ու կրթօջախները։ Հետաքրքրությամբ է ընթերցվում նաև «Գրական կյանք» բաժինը, ուր զետեղված են Հայրենի գյուղի ստեղծագործողների հակիրճ կենսագրականներն ու նրանց բանաստեղծությունները։ Այս

ամենում ևս տեսնում ենք հեղինակի քննախույզ հայացքը, նրա վերլուծելու և ընդհանրացնելու կարողությունները։ Օրինակ, ճշգրտելով դպրոցի հիմնադրման հետ կապված մանրամասնությունները, հեղինակը գրում է, որ 1893—1895 թթ. այստեղ ավագ ուսուցիչ է աշխատել Աթարեկ Խնկոյանը, որը շատ բան է արել դպրոցի կազմակերպման և գրադարանի հիմնադրման համար։ Ի դեպ, այդ կարևոր փաստը, որը կարող էր լրացնել մեծանուն մանկագրի կենսագրական տվյալները, ուրիշ ոչ մի տեղ չի արձանագրված։

Գրքի վերջին երեք գլուխները, որոնք կրում են «Վերադարձ դեպի 1918—1923 թվականները», «Հայոց վերջի բալասանը» և «Մահ իմաստյալ...» խորագրերը, նվիրված են մեր օրերի ազատագրական պայքարի ու Արցախի հիմնահարցի լուծման գործում արարատցիների ներդրած շանքերի վերհանմանը։ Կարդալով այդ էջերը՝ իմանում ենք, որ դեռևս 1988 թ. ամռանը Արարատում ստեղծվում է մարտական ջոկատ, որի շնորհիվ անառիկ են մնում Սրասխավանն ու այլ սահմանամերձ գյուղեր։ Ջոկատը մշտապես համալրվելով՝ շուրջ հինգ տարի խիզախորեն մասնակցել է Արցախում ու Զանգեզուրի սահմանամերձ շրջաններում տեղի ունեցած ազատագրական պայքարի ու Արցախի հիմնահարցի լուծման գործում արարատցիների ներդրած մարտերին։ Այդ սուրբ կռիվներում զոհվել են շատ արարատցիներ, որոնց կյանքն ու քաջագործությունները նկարագրված են գրքում։

Ա. Խաչատրյանի գիրքը հարուստ է նաև լուսանկարներով։ Անցյալն ու ներկան շաղկապող մի քանի տասնյակ դիմանկարներն ու խմբանկարները, գյուղի պատմական հուշարձաններն ու մերօրյա կառույցները վերհանող մյուս պատկերները ավելի են հարստացնում գրքի բովանդակությունը և այն դարձնում հետաքրքիր։ Այն ունի ընդարձակ առաջաբան, որի հեղինակն է մատենաշարի հիմնագիր Վլ. Հարությունյանը, ինչպես նաև ռուսերեն ու անգլերեն ամփոփումներ։

Առողջ թերություններ չունի՞ Ա. Խաչատրյանի գիրքը։ Իհարկե ունի։ Ավարտին չի հասցվել գյուղի առհմադրությունը, քիչ տեղ է հատկացված գյուղի վերջին տասնամյակների կյանքին ու առօրյային, առանձին նյութեր մնում են թերի, դրան հակառակ, որոշ նյութեր էլ անհարկի ձգձգված են։ Ցանկալի կլիներ, որ նրանում նյութերը դասավորված լինեին առանձին բաժիններով՝ ըստ բնագավառների ու բովանդակության, որը կհեշտացներ գյուղի մասին անհրաժեշտ տեղեկություններն անմիջապես քաղելը։ Դրանք ցրված են գրքի տարբեր էջերում, տարբեր խորագրերի տակ։ Մնում է հուսալ, որ գրքի երկրորդ հրատարակության ժամանակ կուղղվեն ու կշտկվեն այդ թերությունները։

Ավարտելով մեր խոսքը՝ նշենք, որ ազգի սրբազան պատմությունը յուրաքանչյուր մարդու համար սկսվում է իր հայրենի տան շեմից։ Ամեն մի բնակավայրի պատմությունը հայրենիքի պատմության մի մասն է, նրա հետ ձուլված, նրանից անբաժան։ Իր հայրենի տան մասին մի այդպիսի գեղեցիկ պատմություն է հյուսել վաստակաշատ մանկավարժ Ալբերտ Խաչատրյանը, որը գալիս է ձուլվելու մեր բոլոր տների, մեր ժողովրդի պատմությանը, որը կոչվում է Հայոց պատմություն։

Այսպիսով, մատենաշարը իրականություն է դառնում, առաջին և ամենահամարձակ քայլը կատարվել է, մնում է վստահորեն շարունակել ճանապարհը և ընթերցողի սեղանին դնել մեր հայրենի շենների մաքրաղերծված ու հարուստ պատմությունը։

Վ. Ս. ՄԱՂԱԼՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու